**Արձանագրություն 4**

**ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/36» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի**

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 25.12.2018թ. ժամը 17:00-ին:

Մասնակցում էին՝

***Հանձնաժողովի նախագահ***

**Ռ. Ալեքսանյան** - ՀՀ ՖՆ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մեթոդաբանության և հաշվետվությունների մշտադիտարկման վարչության հաշվապահական հաշվառման մեթոդաբանության բաժնի պետ - վարչության պետի տեղակալ

***Անդամներ***

**Գ. Քոչարյան** – ՀՀ ՖՆ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մեթոդաբանության և հաշվետվությունների մշտադիտարկման վարչության հաշվապահական հաշվառման մեթոդաբանության բաժնի գլխավոր մասնագետ

**Հ. Մելիքյան** – ՀՀ ՖՆ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մեթոդաբանության և հաշվետվությունների մշտադիտարկման վարչության հաշվապահական հաշվառման մեթոդաբանության բաժնի գլխավոր մասնագետ

***Գնումները համակարգող***

**Ա. Աղաբաբյան** - ՀՀ ՖՆ ԳԿՎ գնումների գործընթացի կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ

Բացակայում էին՝

**Ս. Մինասյան** - ՀՀ ՖՆ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մեթոդաբանության և հաշվետվությունների մշտադիտարկման վարչության հաշվապահական հաշվառման մեթոդաբանության բաժնի գլխավոր մասնագետ

**Մ. Համամճյան** - ՀՀ ՖՆ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մեթոդաբանության և հաշվետվությունների մշտադիտարկման վարչության ֆինանսական հաշվետվությունների մշտադիտարկման և աուդիտի կարգավորման բաժնի գլխավոր մասնագետ

## 1. <u>Տեղեկություններ հայտերում առկա անհամապատասխանությունների վերաբերյալ</u>

1. «Գաուդեամուս» ՍՊԸ-ն, Գնել Խաչատրյանը և Արամ Հովհաննիսյանը հրավերով սահմանված ժամկետում (1 աշխատանքային օր) շտկել են հայտերում առկա անհամապատասխանությունները:

2. «Սմարթ Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ն հրավերով սահմանված ժամկետում (1 աշխատանքային օր) չի շտկել հայտում առկա անհամապատասխանությունները՝ «Սմարթ Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի ներկայացրած հավելված 2-ի էլեկտրոնային թվային ստորագրությունը վավեր չէ, լիազորագիրը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

3. Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

**Հանձնաժողովը որոշեց.**

1. «Գաուդեամուս» ՍՊԸ-ի, Գնել Խաչատրյանի և Արամ Հովհաննիսյանի կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:
2. «Սմարթ Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:
3. ՀՀ կառավարության 04.05.2017թ N526-Ն որոշման 40-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն գների նվազեցման նպատակով վարել միաժամանակյա բանակցություններ «Գաուդեամուս» ՍՊԸ-ի, Արամ Հովհաննիսյանի, Գնել Խաչատրյանի և «Գևորգ Սիմոնյան Ջիվանի» Ա/Ձ-ի հետ 10 րոպե տևողությամբ սույն թվականի դեկտեմբերի 28-ին ժամը 11:30-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

## 2. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը</u>

«ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-18/36» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել հրավիրել ույն թվականի դեկտեմբերի 28-ին ժամը 11:30-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ր. Ալեքսանյան

հանձնաժողովի անդամներ՝ _____ Գ. Քոչարյան

_____ Հ. Մելիքյան

Գնումները համակարգող՝ _____ Ա. Աղաբաբյան